2019-Ը` ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՈՒ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ



*Հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամությունը գալիս է դարերի խորքից: Այս մասին են վկայում հայ եւ վրաց գրողների, գրականագետների, մշակույթի գործիչների բազմաթիվ գրավոր ու բանավոր վկայությունները, տարբեր ժամանակներում գրված գրքերն ու առանձին հոդվածները: Դրանցից մեկն էլ 1962 թվականին Երեւանի «Հայպետհրատ» հրատարակչության հրատարակած` գրականագետ Տիգրան Կարապետյանի «Վրաց գրական միտքը Հայաստանի եւ հայերի մասին» աշխատությունն է: Հայաստանը, հայ ժողովուրդը եւ վրաց ու հայ ազգերի բարեկամական հարաբերությունները մշտապես գտնվել են վրաց գրական մտքի կենտրոնում: Գրքում հեղինակը, ուսումնասիրելով ինչպես հրատարակված, այնպես էլ` վրաց արխիվային աղբյուրների մի զգալի մասը, ցույց է տալիս, թե վրաց գրական միտքը որքան բարձր է գնահատել հայ ժողովրդին, մասնավորապես` հայ գրողներին, մշակութային գործիչներին (Գաբրիել Սունդուկյան, Սայաթ-Նովա, Հովհ.Թումանյան, Ավ.Իսահակյան, Րաֆֆի, Շիրվանզադե, Նար-Դոս, ուրիշներ), ինչպիսի մեծ նշանակություն է տվել հայ եւ վրաց ազգերի դարավոր բարեկամության ամրապնդմանը:*

Ընթերցելով Տիգրան Կարապետյանի այս գիրքը, համոզվում ես, թե վրաց գրողները ինչպիսի ջերմությամբ են խոսում Հովհաննես Թումանյանի ու նրա դերի մասին հայ եւ վրաց դարավոր բարեկամության զարգացման ու ամրապնդման գործում: Չէ՞ որ ամբողջ 2019 թվականը հոբելյանական է. Թումանյանական: Հովհ.Թումանյանի ծննդյան 150-ամյակը այս տարի նշում է նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ն:

Հայ ու վրաց ժողովուրդների բարեկամության փաստերին լավատեղյակ լինելով` Ամենայն Հայոց բանաստեղծը ժամանակին ասել է. «Եվ էն երկու ժողովուրդը, որոնք իրենց պատմությունը սկսում են նրանով, թե Հայկոսը (Հայկ) եւ Քարթլոսը եղբայրներ էին, մնացել եւ մնում են անսասան կապված իրենց փոթորկալից պատմական ու մեծագույն հիշատակներով»:

Վրաստանի մշակույթի գործիչները, այդ թվում` նաեւ գրողները, հատուկ սիրով ու հարգանքով են խոսել հանճարեղ բանաստեղծ, ժողովուրդների բարեկամության դրոշակակիր Հովհ.Թումանյանի մասին: Ահա թե ինչ է գրել 1924 թվականին «Թեաթրի եւ ցխովրեբա» («Թատրոն եւ կյանք») պարբերականի հոդվածագիրը.

«Ռուսթավելու պողոտայով անցնելիս` երբեմն ձեզ կհանդիպեր մի ծերունի, որն ակամա գրավում է ձեր ուշադրությունը:

Անկարելի է, որ դուք մոտովն անցնեիք ու նրան չնկատեիք. նրա ամբողջ արտաքինը, հաղթանդամ մարմինը, դեմքի արտահայտությունը չափազանց գրավիչ էր իր ազնվությամբ:

Քաղաքավարի, կրթված, մաքուր, դեպի ամենքը լի սիրով եւ ազնվությամբ. ահա թե ինչ կարող էիք կարդալ նրա աչքերում, ահա թե ինչ էր վկայում նրա դեմքի ամեն մի մասը:

Այսօր Ռուսթավելու պողոտան որբացած է. նրան այլեւս չի զարդարում այն մեծ ու ազնիվ հռչակավոր ծերունին, եւ մենք ամենքս զգում ենք այդ որբությունը, այդ մեծ կորուստը: Ո՞վ էր այդ ծերունին: Հովհաննես Թումանյանը»:

Ապա հոդվածագիրը, տալով Հովհ.Թումանյանի կյանքի ու գրական գործունեության բնութագիրը, շարունակում է. «Թումանյանն իր աշխատավոր ժողովրդի հոգացողն էր, նրա տենչերի արտահայտիչը, նրա իղձերի երգիչը, նրա վշտերի սփոփիչը եւ, միեւնույն ժամանակ, ոչ պակաս սիրելի նաեւ մեզ համար, որովհետեւ նա սիրեց Վրաստանը, ինչպես իր երկրորդ հայրենիքը: Վրաստանի արեւը, գեղեցկությունը եւ լավ զգացմունքները հյուսված են նրա բանաստեղծության մեջ.

*// Ելնենք` տեսով ու ճանաչով, //Ընկեր, ախպեր, մեր ու քուր`// Մեր քյամանչով, ուրախ կանչով // Գնանք դեպ կյանքն ընդհանուր // :*

Այս էր մեծ բանաստեղծի տենչանքը. վրացիները եւ հայերը, Վրաստանը եւ Հայաստանը, երկուսն էլ նրա համար թանկագին էին: Նա ուզում էր այս երկու ազգերի միջեւ ստեղծել մի ընդհանուր եղբայրական բարեկամություն ու համերաշխություն, որին նա նվիրված էր եւ որի անկեղծ քարոզիչն էր:

Հովհ.Թումանյանը լուսաբացի ավետաբերն էր, ժողովրդի պայծառ առավոտյան Տարիելն էր: Իր ամբողջ էությամբ նա ձգտում էր ու երգում այս պայծառ առավոտը, որովհետեւ նա աշխատավոր ժողովրդի ազատագրման ոգեշունչ քարոզիչն էր». ջերմությամբ, հարազատի անկեղծությամբ ու անմիջականությամբ գրված սույն տողերը վրաց պարբերականը տպագրել է Հովհ.Թումանյանի մահվան առաջին տարելիցի կապակցությամբ:

Խոր վիշտ է պատճառել վրաց ժողովրդին Թումանյանի մահը: «Հայ ականավոր բանաստեղծ Հովհաննես Թումանյանի Մոսկվայում վախճանվելու լուրը ծանր տպավորություն գործեց բանվորների, գյուղացիների եւ աշխատավորական կազմակերպությունների վրա»,- գրում է 1923թ. հունվարին, երկրի այն ժամանակվա գլխավոր թերթը, «Կոմունիստի» թերթի 69-րդ համարը:

Թումանյանի մահը ծանր տպավորություն է գործել նաեւ վրաց ճանաչված բանաստեղծ Իոսեբ Գրիշաշվիլու վրա: Հայ պոետի մահվան առիթով գրած «Վրաստանի բարեկամին» բանաստեղծության մեջ նա արտահայտում է իր ծանր վիշտը:

Իմիջիայլոց, հետաքրքրական է Գրիշաշվիլու հուշերն այս բանաստեղծության վերջին տան մտահղացման մասին. «...Գրական աշխատանքի շուրջը զրույցից հետո Հովհաննեսը հայտնեց. «Ցանկանում եմ երկար ժամանակվա իղձս իրագործել, ցանկանում եմ թարգմանել Հոմերոսին, Ֆիրդուսուն եւ Ռուսթավելուն, մասնավորապես հավանում եմ «Վեփխվիս տղաոսանին» եւ, եթե հիվանդությունս չխանգարեց, մտածում եմ այս մեծ աշխատանքին ձեռնարկել գարնանից»:

Այլեւս հնարավորություն չունեցավ: Երբ լսեցի նրա մահը, անմիջապես հիշեցի այն երեք պոետներին, եւ այդ առթիվ իմ գրած բանաստեղծությունն այսպես վերջացրի.

*// Կբացվի ծոցը անդրշիրիմյան, // Կթեքվի արեւն հասկից ավելի, // Եվ քեզ կողջունե փունջն երրորդության,- // Ֆիրդուսին, Հոմերն ու Ռուսթավելին //:*

Իր սերը Թումանյանի նկատմամբ Գրիշաշվիլին արտահայտել է հայ բանաստեղծից կատարած բարձրորակ թարգմանություններով, որոնց շնորհիվ Թումանյանը դարձավ վրաց ժողովրդի սիրելին: 1924 թվականին Գրիշաշվիլու թարգմանությամբ առաջին անգամ լույս է տեսնում Հովհ.Թումանյանի «Ընտիր երկերը»: Իոսեբ Գրիշաշվիլին կատարել էր իր խոստումը. (Մի անգամ զրույցի ժամանակ Գրիշաշվիլին եւ Թումանյանը խոստացել էին թարգմանել միմյանց երկերը):

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Հովհ.Թումանյանի եւ վրաց բանաստեղծի անձնական ծանոթությունը, նրանց բարեկամական-ստեղծագործական փոխհարաբերությունները քիչ դեր չեն կատարել Գրիշաշվիլուն` ուսումնասիրել հայ-վրացական գրական-մշակութային կապերը, որի հետեւանքը եղել են հայ գրողներին ու հայ թատրոնին նվիրված մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ: Հիշատակության է արժանի հետեւյալ փաստը, որ վերաբերում է Հովհ.Թումանյանի եւ Ի.Գրիշաշվիլու առաջին ծանոթությանը եւ դրա արդյունավետ հետեւանքների պատմությանը: Ահա ինչ է գրում Իոսեբը. «Հովհաննես Թումանյանի հետ ես ծանոթացա 1914 թվականի մայիսի 15-ին, ճիշտ այն օրը, երբ հուշաքար էր դրվում Սայաթ-Նովային Հին Թբիլիսիում, եւ այդ օրը նշվում էր Սայաթնովյան վարդատոնը:

Այս տոնակատարության նախաձեռնողը Հովհ.Թումանյանն էր: Թերթերում հայտարարված էր, որ հուշաքարի բացման եկողները գան Սայաթ-Նովայի սիրած ծաղկով` «կարմիր վարդով...»,- գրում է Իոսեբ Գրիշաշվիլին եւ շարունակում. «Հենց այս տոնակատարությանն էլ որոշեցի, որ վրացիներին էլ ծանոթացնեմ այս մոռացության մատնված Հին Թիֆլիսի երգչին, նոր սազ տամ նրա ձեռքը: 1918 թվականին առանձին բրոշյուրով լույս ընծայեցի Սայաթ-Նովայի մասին մենագրությունը` նրա վրացերեն երգերի հետ միասին»: Ապա շարունակում է վրաց մեծ բանաստեղծը. «Այս բնագավառում իմ աշխատանքը շատ դժվար կլիներ, եթե ինձ չօժանդակեին ակադեմիկ Նիկողայոս Մառը, նկարիչ Գեւորգ Բաշինջաղյանը եւ, մասնավորապես, Հովհաննես Թումանյանը»,- խոստովանում է վրաց բանաստեղծը:- «Ահա այսպես Սայաթ-Նովան մոտեցրեց ինձ Հովհաննեսին»:

«Մի անգամ Հովհաննեսը հիվանդ էր, սպասում էր բժշկի, եւ ես հանկարծ դուռը բացի.

*// Ինչ կոնիմ հեքիմն, // Ինչ կոնիմ ջարեն, // Քու տվածն ուրիշ դիղ է, // Ուրիշ դիղ:*

Ինձ դիմավորեց նա Սայաթ-Նովայի այս հայտնի բանաստեղծությամբ»,- հիշում է վրաց մեծ բանաստեղծը:

1948 թվականին գրած «Հովհաննես Թումանյանի հիշատակին» բանաստեղծության մեջ Ալեքսանդր Աբաշելին իր անհուն սերն է արտահայտել «Ռուսթավելու սերնդի սիրելի եղբոր» նկատմամբ: Բանաստեղծն ուրախությամբ է նշում, որ «սիրելի Հովհաննեսի» անունը, որպես վրաց ժողովրդի մեծ բարեկամի, ջերմությամբ է հիշում ամեն մի վրացի:

Հայաստանի եւ հայերի մասին արտահայտվել ու գրել են նաեւ Շալվա Դադիանին, Կոնստանտինե Գամսախուրդիան, Տիցիան Տաբիձեն, Պաբլո Իաշվիլին, Սիմոն Չիքովանին եւ Սանդրո Էուլին: Այս գրողները բարեկամական կապերի մեջ են եղել հայ գրողներից շատերի, հատկապես` Հովհ.Թումանյանի եւ Ավ.Իսահակյանի հետ:

Թումանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ ականավոր գրող-դրամատուրգ Շալվա Դադիանին գրում է «Անվեհեր հոգու տեր պոետը» խոսքը, որտեղ ասում է, որ ինքն այնքան էլ մոտիկից չի ճանաչել ժողովուրդների եղբայրության քարոզիչ եւ մեծ բանաստեղծ Հովհ.Թումանյանին: Հազիվ երկու թե երեք անգամ զրույց է ունեցել նրա հետ, սակայն այդքանն էլ բավական է եղել, «որպեսզի մարդ կախարդվեր նրա հոգու անվեհերությամբ: Ջուսպ, բայց քաղցր զրուցընկեր էր, թեկուզեւ ալեհեր, սակայն կենդանի, աշխույժ աչքերով: Նա մեծ հավատ ու հոգու անսասանություն էր հանդես բերում, երբ խոսքը վերաբերում էր իրեն հետաքրքրող ու այրող հարցերին: Իսկ այդ հարցերը պոեզիան ու ժողովուրդների բարեկամությունն էին, հայ-վրացական փոխհարաբերությունները: Որքան քնքշանք, որքան գորովալից սրտի կսկիծ կար նրա խոսքերի մեջ: Նա հավատում էր, որ Հայաստանն ու Վրաստանը, ինքնուրույն զարգանալով ու հասունանալով, հարազատ ու բարձր մշակույթով զինված, վերջում իրենց լուման պիտի գցեն ողջ մարդկության գանձարանը»:

Հայ եւ վրաց ժողովուրդների փոխադարձ սերն ու բարեկամությունը խոր հուզականությամբ է երգել Սիմոն Չիքովանին «Ղվարելիում» բանաստեղծության մեջ: Այստեղ հեղինակն իր ջերմ սերն է արտահայտում Հովհ.Թումանյանի նկատմամբ եւ միաժամանակ նշում, որ Ղվարելիում ` Իլիա Ճավճավաձեի հայրենիքում, ժողովուրդը մեծ սիրով է հիշում հանճարեղ բանաստեղծին, որն իր հերթին Ճավճավաձեի հայրենիքն է սիրել կաթոգին սիրով եւ վրաց ժողովրդին հղել անխախտ եղբայրության ու բարեկամության իր ջերմ խոսքը: Չիքովանին հպարտության զգացումով է լցվում, երբ մտաբերում է այն փաստը, որ երկու մեծ դեմոկրատ բանաստեղծներ Հովհ.Թումանյանը եւ Ի.Ճավճավաձեն դեռեւս անցյալում իրենց ժողովուրդների միջեւ անխախտ եղբայրության կուռ հիմքեր են դրել:

*// Ավա՜ղ, ես չեմ լսել նրան, Հովհաննեսին խոհուն, //Երբ որ զրույց է նա արել եղբայրության մասին, //Երբ երգ է նա ձոնել սիրով Վրաստանի ոգուն, //Երգել դաշինքը դարավոր Քուռի ու Արաքսի //:*

Այսպիսի ջերմ խոսքերով է ավարտում Թումանյանին նվիրված իր բանաստեղծությունը վրաց ժողովրդի զավակ Սիմոն Չիքովանին, որ զետեղված է Տիգրան Կարապետյանի «Վրաց գրական միտքը Հայաստանի ու հայերի մասին» գրքում :

***Պատրաստեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# ՀԻՆ ՆՄՈՒՇԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ՆՈՐԱՑՄԱՆ ԱԿՑԻԱ

*Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու նախաձեռնությամբ, Վրաստանի տարեց այն քաղաքացիները, ովքեր ունեն հին նմուշի (այսպես կոչված, լամինացված) անձնական վկայականներ եւ մինչ օրս նրանց անվամբ երբեք չի տրվել Վրաստանի քաղաքացու անձնական էլեկտրոնային վկայական, մեկ ամսվա ընթացքում` փետրվարի 1-ից մարտի 1-ը ներառյալ, կունենան օգտվելու հին փաստաթուղթը նորով փոխարինելու եւ անվճար ժամանակակից եվրոպական չափորոշիչներին համապատասխան, անձնական էլեկտրոնային վկայական ստանալու հնարավորություն:*

2012 թվականի վերջին Վրաստանում 3087163 քաղաքացու տրվել էր հին նմուշի, թղթե անձնական վկայական: Այսօրվա դրությամբ, Վրաստանում գործողության մեջ մնացել է այդ նմուշի 749537 վկայական: Այդ քանակությունից ամենաշատը վավերացվել է Թբիլիսիում` 175914, ապա Իմերեթիում` 125383, Կախեթիում` 80007 եւ Քվեմո Քարթլիում` 79947 վկայական:

Վերոնշյալ ակցիայից օգտվել ցանկացող քաղաքացիները պետք է դիմեն «Արդարադատության տուն», պետական սպասարկումների զարգացման գործակալության տարածքային ծառայություններին կամ հասարակական կենտրոններին: Ակցիայի շրջանակներում, փաստաթուղթը ստանալիս, քաղաքացին ազատվում է ինչպես անձնական վկայականից, այնպես էլ` լուսանկարման ծախսերից:

2014 թվականից Վրաստանում գործում են լուսանկարներով ընտրական ցուցակներ, եւ դա ձեւակերպվել է կենսաչափական փաստաթղթերի հիման վրա: Հետեւաբար, կենսաչափական փաստաթուղթ ունենալը ապահովում է մեկ ընտրող, մեկ ձայն սկզբունքը եւ բացառում ընտրությունների օրը ընտրատեղամասերում, այսպես կոչված, «կառուսելի» անցկացմանը:

Ընտրացուցակների կատարելագործման նպատակով, արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու նախաձեռնությամբ իրականացված միջոցառումների արդյունքում, վերջին հինգ տարվա ընթացքում, հավանական ընտրողների բազան նշանակալիորեն կատարելագործվել եւ կարգավորվել է: Մասնավորապես, 2,6 միլիոն ավելի քաղաքացիների տրվել է անձնական էլեկտրոնային վկայական, որից 1 միլիոն 470 հազարը, նախարարի որոշմամբ, տրվել է անվճար կամ արտոնյալ գնով:

Այսօրվա դրությամբ, ընտրական իրավունք ունեցող Վրաստանի 2 միլիոն 650 հազարից ավելի քաղաքացիներ ունեն անձնական էլեկտրոնային վկայականներ, իսկ լրացուցիչ 260 հազարից ավելի Վրաստանի քաղաքացիների տրվել է կենսաչափական անձնագրեր, ինչը պայմանավորվել է սպասարկումների զարգացման գործակալության բազայում ավելի քան 2 միլիոն 910 հազարի չափ ստույգ եւ ստուգված տվյալների առկայությունը:

***ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԻՆՉՈՒ ԵՆ ԹՄՐՈՒՄ ՎԵՐՋՈՒՅԹՆԵՐԸ



*Վերջին ժամանակներում ինչ սկսել է բավականին անհանգստացնել այն, որ, աշխատելու, առանձնապես համակարգչի մոտ աշխատելու ժամանակ, մատներս թմրում են, կորցնում զգայականությունը, դադարում են ենթարկվելուց: Նախկինում նման ոչինչ չի եղել, եւ դա մտահոգիչ է: Գուցե դուք պարզաբանեք, ինչո՞վ է դա պայմանավորված եւ որքանո՞վ է վտանգավոր:*

***Տ.Ստեփանյան***

***Թբիլիսի***

Վերջույթները հիմնականում թմրում են, երբ անհարմար դիրքում մնալու պատճառով անոթներն ու նյարդերը սեղմվում են, եւ ժամանակավորապես խախտվում է արյան շրջանառությունը: Բավական է շարժվել կամ դիրքը փոխել, եւ այդ տհաճ երեւույթը վերանում է: Սակայն, եթե վերջույթների զգայունությունը հաճախակի է խախտվում եւ դա երկար է տեւում, հնարավոր է, որ այդ երեւույթը որեւէ հիվանդությամբ է պայմանավորված: Վերջույթներում թմրածությունը կարող է հուշել պարանոցի օստեոխոնդրոզի, ցրված սկլերոզի, դաստակի թունելային համախտանիշի, վերջույթների երակների թրոմբոզի, սակավարյունության եւ շաքարային դիաբետի, ուղեղում արյան շրջանառության խանգարման (կաթված) մասին: Նման ախտանշանը չի կարելի անտեսել, քանի որ սկսվող հիվանդությունը ժամանակին չկանխելու դեպքում, այն կարող է քրոնիկականի վերածվել:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## VOLKSWAGEN-Ը` ԱՌԱՋԻՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ



*Volkswagen AG գերմանական ավտոմոբիլային խումբը աշխարհի խոշորագույն ավտոարտադրողն է դարձել 2018 թվականի արդյունքներով: Ընկերությունն առաջին տեղը պահպանում է երրորդ տարին անընդմեջ:*

Ճապոնական Toyota-ն հունվարի 30-ին հաշվետվություն է ներկայացրել անցյալ տարի վաճառքների 2 տոկոս աճի մասին` մինչեւ 10,6 մլն ավտոմոբիլ: Ցուցանիշը ներառում է նաեւ Daihatsu եւ Hino բրենդների վաճառքները: Հունվարին ավելի վաղ Volkswagen-ը հայտնել էր, որ վաճառքների ծավալն ավելացրել է մինչեւ 10,8 մլն մեքենա: Բացի համանուն բրենդից, գերմանական ավտոկոնցեռնին պատկանում են Audi, Bentley, Bugatti, Lamborghini, Porsche, SEAT, Skoda թեթեւ մարդատար ավտոմեքենաների մակնիշները, Ducati մոտոցիկլետները, MAN, Scania եւ Volkswagen Commercial բեռնատարները:

Ճապոնական մեկ այլ ավտոարտադրող` Nissan Motor Co.-ն, 2018 թվականին իրացրել է 5,65 մլն ավտոմեքենա:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

## ՈՐՏԵՂ ԵՆ ԱՊՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ԿԱՆԱՅՔ

*Վենեսուելան գեղեցկության միջազգային խոշորագույն մրցույթների արդյունքներով դարձել է այն երկիրը, որտեղ ապրում են աշխարհի ամենագեղեցիկ կանայք: Այդ մասին հայտնել է Missosology-ն:*



Վարկանիշի առաջին տեղը երկրին ապահովել են «Միսս Ինտերնեշնլ» Մարիեմ Վելասկոն, ինչպես նաեւ` «Միսս Տիեզերք», «Միսս աշխարհ», «Միսս Սուփրանեշնլ» եւ «Միսս Երկիր» մրցույթների մասնակիցները: Երկրորդ հորիզոնականը զբաղեցրել է Ֆիլիպինները` «Միսս Տիեզերք» Կատրիոնե Գրեյի շնորհիվ: Հաջորդ տեղում է Մեքսիկան, որի ներկայացուցչուհին` Վանեսա Պոնսե դե Լեոնը, ստացել է «Միսս աշխարհ» տիտղոսը: Առաջատարների հնգյակը եզրափակում են Հարավաֆրիկյան Հանրապետությունը եւ Վիետնամը:

Տասնյակում տեղ են գտել նաեւ ԱՄՆ-ը, Թաիլանդը, Պուերտո-Ռիկոն, Կոլումբիան եւ Ինդոնեզիան, հաղորդել է ՌԻԱ Նովոստին:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ ԿԱՌԱՎԱՐՈ՞ՒՄ Է ՄԵԶ

### ԵՐԲԵՄՆ ՎԻՐՏՈՒԱԼ ԿՅԱՆՔԸ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

*Վերջին տարիներին տեղեկատվական տեխնոլոգիաների մուտքը նաեւ հայ իրականություն, հաստատեց համակարգչի կիրառությունը մեր առօրյա կյանքում: Ներկայում այն հաճախ կարողանում է փոխարինել այնպիսի տեղեկատվական միջոցների, ինչպիսիք են, օրինակ, գրականությունը, մամուլը, ռադիոն, երբեմն նաեւ հեռուստատեսությունը եւ այլն: Ոմանք համակարգիչը դիտարկում եւ կիրառում են միայն խիստ անհրաժեշտության պարագայում, իսկ ոմանք` ընդհակառակը, դրանով փոխարինում են կապն արտաքին աշխարհի հետ: Կախվածությունը էլեկտրոնային այս սարքից մեծանում է հատկապես այն դեպքում, երբ մարդը համակարգիչը կիրառում է զվարճանքներ փնտրելու նպատակով` կամա թե ակամա կտրվելով հասարակական կյանքից:*

Ցավոք, այսօր չկա վիճակագրություն, թե երիտասարդության ո՞ր հատվածն է առավել շատ օգտագործում համակարգիչ կամ ո՞վ ինչ նպատակով: Սակայն, բոլոր դեպքերում նկատվում է այն միտումը, որ, սկսած դեռահասության տարիքից, նույնիսկ հասուն տարիքի մարդիկ շատ հաճախ տարվում են համակարգչով: Համարգիչը եւ ինտերնետը դրական իմաստով լուրջ փոփոխություններ մտցրեցին հասարակության առօրյայում, սակայն փորձենք անդրադառնալ այն ստվերոտ կողմերին, թե համակարգիչը ի՞նչ պրոբլեմներ է հարուցում: Պարզվում է, որ այսօր, քաղաքակրթական զարգացման արդի փուլում, հասարակությունը գտնվում է այնպիսի վիճակում, որտեղ նոր պրոբլեմներ են առաջանում մարդու առաջ առհասարակ: Ոմանք տարվում են ինտերնետային տարբեր կայքեր հաճախելու սովորույթով, իսկ ոմանք` տարատեսակ խաղերով: Մասնագետների դիտարկմամբ, հատկապես պատանիների շրջանում, ինտերնետային խաղերով տարվելը կարող է լուրջ կախվածություն առաջացնել` հանգեցնելով հոգեբանական տարբեր շեղումների:



Բացի հոգեբանական ներգործությունից, համակարգչի չարաշահումը բացասաբար է անդրադառնում նաեւ առողջական տեսանկյունից` առաջ բերելով տեսողության վատթարացման մի շարք խնդիրներ, օրինակ` կարճատեսություն, աչքաթարթություն եւ այլն:

Իհարկե, անհերքելի է, որ համակարգչային նախատիպերը այսօր բավականաչափ մշակվել են մարդկանց տեսողության վրա առավել քիչ ներգործելու նպատակով, սակայն ոչ մի բժիշկ չի կարող հերքել, որ համակարգչի թեկուզ հղկված հարթ էկրանն ունի իր բացասական գործոնը:

Արդյոք հանրակրթական դպրոցներում վաղ հասակից համակարգչային դասընթացների ուսուցանումը չի՞ նպաստում այդ տեխնիկայի հանդեպ հետաքրքրության մեծացմանը: Հոգեբանների համոզմամբ, այսօրվա սերնդին չպետք է զրկել համակարգչային գիտելիքներին դեռ վաղ հասակից տեղեկացված լինելու իրավունքից: Սակայն համակարգչի չարաշահումը անթույլատրելի է հատկապես դեռահասների համար. Նախընտրելի է համակարգիչը կիրառել օրվա մեջ միայն մեկ ժամ տեւողությամբ, ոչ թե երեք կամ վատագույն դեպքում` չորս ժամ: Ոչ մի օգտակարության դա չի կարող հանգեցնել, բացի վնասակար ներգործությունից: Կարող է հանգեցնել նաեւ շարունակական նեւրոզների առաջացման: Այս երեւույթը բացասաբար է անդրադառնում հատկապես 8-15 տարեկան երեխաների վրա:

Ինչ վերաբերում է խաղերին, ապա դրանք մեծ կախվածություն են առաջացնում հատկապես երեխաների շրջանում: Խաղը «ես»-ի ինքնահաստատման եւ ինքնագնահատականի հետ ուղիղ կապի մեջ է: Խաղի մեջ երեխայի առջեւ որոշ խնդիրներ են դրված` հաղթելու կամ պարտվելու: Հաղթանակը միշտ մարդուն հաճելի հոգեվիճակ է պարգեւում, եւ այս իմաստով դարձյալ ռեալությունից կտրվելու վիճակ է առաջանում: Իսկ մյուս առումով այդ խաղերը բավարարում են մարդու հեդոնիստական պահանջները: Մենք բոլորս էլ հեդոնիստներ ենք` հաճույքի ձգտող արարածներ: Խաղը տարիքային զարգացման տեսանկյունից կյանքի մի փուլում մարդու ակտիվության գործունեության առաջատար ձեւն է:

Բայց երբեմն նույնիսկ հասուն մարդը հանգիստ հոգեվիճակի մեջ հայտնվելու համար խաղալու ցանկություն է հայտնում եւ կտրվելով առօրյա հոգսերից ու պրոբլեմներից` ընկղմվում համակարգչի մեջ: Այստեղ ի հայտ է գալիս տարիքային նահանջ: Բայց պետք է ուշադիր լինել եւ չչարաշահել սահմանները: Հասուն մարդը պետք է ճշգրտի իր սահմանները:

Արդյոք հնարավո՞ր է, որ հոգեպես առողջ մարդը, այդ կախվածության արդյունքում, հոգեբանական լուրջ շեղումներ ձեռք բերի: Հոգեբանը ավելի շատ հակված է այն կարծիքին, որ այս երեւույթը կարող է սպառնալ այն մարդկանց, ում անձը թույլ է զարգացած, սակայն այդ վտանգից ապահովագրված չեն նաեւ հոգեպես առողջ մարդիկ:

Նշենք նաեւ, որ թեեւ այսօր համակարգիչը իսկապես դարձել է մեր կյանքի բաղադրիչ մասը, այնուամենայնիվ, նույնիսկ այն մարդիկ, ովքեր աշխատանքի բերումով արդեն իսկ կառավարվում են համակարգչի կողմից, պետք է հաշվի առնեն այն հանգամանքը, որ այդ էլեկտրոնային սարքը երբեք չի կարող փոխարինել թղթին եւ գրչին: Ստեղծագործող մարդը առավել լիարժեք կարող է ստեղծագործել թուղթ ու գրչի առաջ: Այն առավել արդյունավետ է դարձնում ստեղծագործելու գործընթացը.

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է:

***ԵՂԻՇԵ***
***V դար***
***Հայ պատմիչ***

Երբ տարիքի ծանր բեռից կռանում ենք եւ աղեղվում, ձանձրալի ենք դառնում արդեն, եւ բոլորն են մեզնից նեղվում:

***ԱԼԵՔՍԱՆԴՐ ՃԱՎՃԱՎԱՁԵ***
***(1786-1846)***
***Վրաց բանաստեղծ***

Երբեք մի' մոտեցեք մարդուն` մտածելով, թե նրա մեջ ավելի շատ վատ բան կա, քան լավ:

***Մ.ԳՈՐԿԻ***
***(1868-1936)***
***Ռուս գրող***

Որեւէ մեկի հատկանիշը գնահատելու համար հարկավոր է այդ հատկանիշի որոշ մասն ունենալ նաեւ իր մեջ:

***Վ.ՇԵՔՍՊԻՐ***
***(1654-1616)***
***Անգլիացի բանաստեղծ***

Միայն այն ժամանակ, երբ հանգիստ ընդունում ես բոլոր ասածները քո մասին, որպես կանոն, այլեւս ոչինչ չեն խոսում:

***Ք.ՊՈՂՈՍՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Կառավարությունն այս կարգով երդմնակալության արարողություն է անցկացնում երկրորդ անգամ: Առաջին անգամ Հայաստանի քաղաքական եւ պետական կառավարման մշակույթում նման իրադարձություն տեղի է ունեցել 2018թ. մայիսի 21-ին:

Հիշեցնենք, որ հունվարի 14-ին Հայաստանի նախագահի հրամանագրով Նիկոլ Փաշինյանը նշանակվեց երկրի վարչապետ, իսկ հունվարի 19-ին նախագահը մի խումբ նախարարների նշանակման հրամանագրեր ստորագրեց:

Նախագահի հրամանագրերով՝ **Զոհրաբ Մնացականյանը** վերանշանակվել է արտաքին գործերի նախարարի պաշտոնում, **Դավիթ Տոնոյանը**՝ պաշտպանության նախարարի պաշտոնում, **Արայիկ Հարությունյանը**՝ կրթության եւ գիտության նախարարի պաշտոնում, **Սուրեն Պապիկյանը**՝ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի պաշտոնում, **Էրիկ Գրիգորյանը**՝ բնապահպանության նախարարի պաշտոնում, **Ֆելիքս Ցոլակյանը**՝ արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնում, **Հակոբ Արշակյանը**՝ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի պաշտոնում, **Տիգրան Խաչատրյանը**՝ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարի պաշտոնում, **Ատոմ Ջանջուղազյանը**՝ ֆինանսների նախարարի պաշտոնում, **Արսեն Թորոսյանը**՝ առողջապահության նախարարի պաշտոնում, **Արտակ Զեյնալյանը**՝ արդարադատության նախարարի պաշտոնում: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի պաշտոնում է նշանակվել **Զարուհի Բաթոյանը**:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԵՐԿՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ 27-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



Նրանք ծաղիկներ խոնարհեցին սպարապետ Վազգեն Սարգսյանի, զորավար Անդրանիկի շիրիմներին եւ Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ու զինծառայողների հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

Նշենք, որ հունվարի 28-ը Հայկական զինված ուժերի կազմավորման օրն է, այն 27 տարեկան է: 1992թ. հունվարի 28-ին կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշում՝ դրանով իսկ իրավականորեն ազդարարելով Հայոց Ազգային բանակի ստեղծումը: 1992թ. մայիսին պաշտպանության նախարարությունը սկսեց առաջին զորակոչը հանրապետության տարածքում՝ հիմք դնելով բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին:

Հայոց բանակի օրվա առիթով Հայաստանի նախագահական նստավայրում տեղի ունեցավ պետական պարգեւների հանձնման հանդիսավոր արարողություն:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԳԵՐՄԱՆԻԱ



*Հունվարի 30-31-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հրավերով, երկօրյա այցով գտնվում էր Բեռլինում:*

Այցի շրջանակներում՝ Հայաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ Գերմանիայի բարձրագույն ղեկավարության հետ՝ նախագահ Ֆրանկ Վալտեր-Շտայնմայերի, կանցլեր Անգելա Մերկելի, Բունդեսթագի նախագահ Վոլֆգանգ Շոյբլեի հետ: Նիկոլ Փաշինյանը այցելեց Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի գրասենյակ, որտեղ հանդես եկավ խոսքով: Նաեւ Հայաստանի վարչապետը հանդիպում ունեցավ Գերմանիայի տնտեսության Արեւելյան հանձնաժողով-Արեւելյան Եվրոպա միության եւ գերմանական առաջատար ընկերությունների ներկայացուցիչների հետ:

Այցի շրջանակներում՝ Գերմանիայի Քյոլն քաղաքում վարչապետը հանդիպում ունեցավ տեղի հայ համայնքի ներկայացուցիչների, ինչպես նաեւ՝ Քյոլնի քաղաքապետի հետ, եղավ Քյոլնի տեխնիկական համալսարանում, հանդիպում ունեցավ ուսանողների ու պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

## ՆՈՐ ՊԱՇՏՈՆ. ՍՓՅՈՒՌՔԻ ԳԾՈՎ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԴԵՍՊԱՆ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ

*Հայաստանի վարչապետի աշխատակազմը կունենա Սփյուռքի գծով հատուկ հանձնարարությունների դեսպան, ով կլինի Սփյուռքի հետ հարաբերություններում վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչը: Այս մասին Քյոլնում, հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ, ասաց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:*

Վարչապետը նկատեց, որ սփյուռքի նախարարության գործառույթները պետք է վերաբաշխվեն:

- Օրինակ, Սփյուռքի նախարարությունը մշտապես արտերկրում հայկական կրթօջախների համար ուղարկում էր դասագրքեր, բայց սփյուռքի ուսուցիչների վերապատրաստումն իրականացնում էր կրթության եւ գիտության նախարարությունը: Եվ մենք շատ հաճախ ունենում ենք իրավիճակներ, երբ ուսուցիչները վերապատրաստվում են մի նախարարության ծրագրի շրջանակներում, իսկ դասագրքեր ստանում են մեկ այլ նախարարության կողմից:

Ստացվում է, որ այդ դասագրքի օգտագործումը եւ ուսուցիչների վերապատրաստումը դառնում է ոչ արդյունավետ,- հայտարարեց Փաշինյանը եւ հավելեց.

- Հատուկ հանձնարարություններով դեսպանը ոչ մի անելիք չի ունենա՝ բացի Սփյուռքի հետ կապված հարցերը հավաքելուց, լուծումների վերաբերյալ առաջարկներ ներկայացնելուց եւ վարչապետի միջոցով այդ լուծումներն իրականացնելուց:

## ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է 11,2 ՏՈԿՈՍՈՎ

### ՀԱՄԱՆԵՐՄԱՄԲ ԱԶԱՏՎԱԾ 581-ԻՑ 30-Ը ԿՐԿԻՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԿԱՏԱՐԵԼ

*Անցած տարվա ընթացքում Հայաստանում գրանցված հանցագործությունների ընդհանուր թիվն աճել է 11.2 տոկոսով կամ 2267 դեպքով:*

2017 թվականին հանցագործությունների ընդհանուր թիվը եղել է 20 հազար 284, 2018 թվականին՝ 22 հազար 551: Աճը հիմնականում պայմանավորված է երկու հանցատեսակների գծով: Առաջինը կոռուպցիոն բնույթի հանցագործություններն են: Եթե 2017 թվականին արձանագրվել է կոռուպցիոն բնույթի 634 հանցագործության դեպք, ապա 2018 թվականին դրանց թիվն աճել է մոտ 2.5 անգամ՝ կազմելով 1353:

Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով, ոստիկանության ստորաբաժանումների կողմից իրականացված գործողությունների արդյունքում, 2018 թվականին բացահայտվել է պետությանը, կազմակերպություններին եւ անձանց հասցված շուրջ 5.7 միլիարդ դրամի վնաս, 2017 թվականին հասցված վնասը կազմել է շուրջ 735 միլիոն դրամ:

Ինչ վերաբերում է համաներմամբ ազատ արձակվածների շրջանում կատարված իրավախախտումներին, ապա նախորդ տարի Երեւանի 2800-ամյակի եւ Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ, համաներմամբ ազատ արձակված 581 անձանցից 30-ը կրկին կատարել են 42 հանցագործություն: Ընդ որում՝ 1 ավազակություն, 28 գողություն, որոնցից 10-ը՝ բնակարանային եւ այլն:

### ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ ԵՆ

*Հայաստան-Եվրամիություն համագործակցության խորացման ու զարգացման համատեքստում բավական կարեւոր քայլ էր եվրոպական հանչնաժողովի հարեւանության քաղաքականության եւ ընդլայնման բանակցությունների հարցերով ԵՄ հանձնակատար Յոհաննես Հանի այցը Հայաստան: Այցի շրջանակներում, բացի Հայաստանին ԵՄ ֆինանսական աջակցության եւ ներդրումների ներգրավման հարցերից, քննարկվել է նաեւ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) վավերացման եւ կյանքի կոչման գործընթացը, ինչպես նաեւ՝ Հայաստանի համար ԵՄ վիզային ռեժիմի ազատականացման հարցը:*

*Համաձայնագրի շուրջ փոխգործակցության ամրապնդմանն ուղղված կարեւոր քայլ է նաեւ ՀՀ կողմից մշակված ՀՀ-ԵՄ համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը, որն արդեն իսկ փոխանցվել է եվրոպական կողմին:*

*Քննարկված մեկ այլ կարեւոր հարց էր ՀՀ հետ վիզային ռեժիմի ազատականացման գործընթացը: Այս հարցում որոշակի առաջընթաց կարելի է ակնկալել Եվրախորհրդարանի մայիսի 23-26-ը տեղի ունենալիք ընտրություններից հետո, քանզի այդ գործընթացը եւս անհրաժեշտ է համաձայնեցնել ԵՄ բոլոր անդամ երկրների հետ:*

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԵԼ Է 5,8 ՏՈԿՈՍՈՎ

*Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) 2018 թվականի հունվար-դեկտեմբերին 5.8 տոկոսով աճել է 2017 թվականի համեմատ: Նախորդ տարվա դեկտեմբերին 2017թ. դեկտեմբերի համեմատ ՏԱՑ-ն աճել է 6.4 տոկոսով:*

*Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, անկում է գրանցվել միայն գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալներում:*

*2018թ. հունվար-դեկտեմբերի ցուցանիշներով շինարարության ոլորտում աճը կազմել է 4.5 տոկոս: Էլեկտրաէներգիայի արտադրության ցուցանիշը 0.2 տոկոսով ավելացել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Ծառայությունների ծավալն (առանց առեւտրի) աճել է 18.8 տոկոսով: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը նվազել է 7.6 տոկոսով:*

### «ԹԱԿԱՐԴ ՍՏԱԼԻՆԻ ՀԱՄԱՐ» ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ՝ ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

*Վրաց երիտասարդ գրող Լաշա Բուղաձեի պիեսի հիման վրա բեմադրված «Թակարդ Ստալինի համար» մեկ գործողությամբ պատմաքաղաքական սատիրայի առաջնախաղը տեղի ունեցավ հունվարի 30-ին, Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում:*

*Ներկայացումն անդրադառնում է Խորհրդային Միության առաջնորդ Իոսիֆ Ստալինի կյանքի մութ կողմերին եւ նրա առեղծվածային մահվանը:*

*- Պիեսը լավն է ու հետաքրքիր: Կարծեցի, որ իմաստ ունի այսօր այդ թեմայի շուրջ կրկին խոսել, քանի որ սերունդներն ասես մոռանում են ստալինյան բռնապետությունը, այդ ժամանակաշրջանն իր դաժանությամբ, նենգությամբ, սարսափով, որը մեր հայրերը, պապերը շատ լավ են հիշում,- մեզ հետ զրույցում ասաց ներկայացման բեմադրիչ Հակոբ Ղազանչյանը:*

*Նա շեշտեց, որ մեր օրերում անհանգստանալ պետք է, քանի որ Ռուսաստանի քաղաքական կյանքի որոշ շրջանակներում Ստալինը համարվում է իր ժամանակների ամենահզոր մարդկանցից մեկը:*

*Ներկայացման մեջ զբաղված են թատրոնի դերասաններ Արթուր Կարապետյանը, Բորիս Պեպանյանը, Սաթենիկ Հախնազարյանը, Զարուհի Խաչատրյանը, Լուսինե Արշակյանը, Գարիկ Ասատրյանը, Հարութ Մելիք-Բեկյանը:*

CyanMagentaYellowBlack



ԷԴՈՒԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱՁԵ - 91

# «ԵՐԿԱԹՅԱ ՎԱՐԱԳՈՒՅՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՏԱՔՍՅԱ ՃԱՆԱՊԱՐՀ» ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

*Հունվարի 25-ին Վրաստանի երկրորդ նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն կդառնար 91 տարեկան:*

Այդ օրը Թբիլիսիի Ռուսթավելու պողոտայում գտնվող Վրացական կերպարվեստի նոր թանգարանում բացվեց Խորհրդային Վրաստանի նախկին ղեկավար, ապա ԽՍՀՄ-ի Արտաքին գործերի նախարար, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Վրաստանի երկրորդ նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հիշատակին նվիրված «Երկաթյա վարագույրից մինչեւ Մետաքսյա ճանապարհ» լուսանկարչական ցուցահանդեսը:

Ցուցահանդեսը բավականին բազմազան է: Այն արտացոլում է Վրաստանի պետական եւ քաղաքական նշանավոր գործչի կյանքի անցած վառ ճանապարհը: Ցուցասրահում ներկայացված են Եդուարդ Շեւարդնաձեի ինչպես հայտնի, արդեն պատմական դարձած, լուսանկարները, նույնպեսեւ հազվագյուտ, նախկինում անծանոթ նկարները:



Ցուցահանդեսի բացմանը տեղի ունեցավ նաեւ Էդուարդ Շեւարդնաձեին նվիրված գրքերի եւ նրա՝ «Խոհ անցյալի եւ ապագայի մասին» հուշապատումի նոր հրատարակության շնորհանդեսը, որն ավելի լիարժեք է ներկայացնում Էդուարդ Շեւարդնաձեին՝ 20-րդ դարի՝ աշխարհի մակարդակով պետական գործչին եւ անհատին:



Ձախից՝ Է.Շեւարդնաձեի Մոսկվայից ժամանած թոռնուհի Սոփո Շեւարդնաձեն, փեսան՝ Գիա Ջոխտաբերիձեն, Շեւարդնաձեի դուստր Մանանա Շեւարդնաձեն եւ Է.Շեւարդնաձեի երկար տարիների օգնական Գելա Չարկվիանին:

Թբիլիսցիներն ու մայրաքաղաքի հյուրերը «Երկաթյա վարագույրից մինչեւ Մետաքսյա ճանապարհ» ցուցահանդեսը կարող են այցելել մինչեւ փետրվարի 7-ը:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐ

## ԹԲԻԼԻՍԻ. ԳԱԶԻ ԱՐՏԱՀՈՍՔԻՑ ԶՈՀՎԵԼ Է ՅՈԹ ՄԱՐԴ

### ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼ ԵՆ ԵՎՍ ՎԵՑԸ

***Հունվարի 31-ին, Թբիլիսիում, Քեթեւան Ծամեբուլու պողոտայի (Իսանիի շրջան) բնակելի շենքում, գազի արտահոսքի հետեւանքով մահացել է յոթ մարդ:***

Ողբերգությունը տեղի է ունեցել բնակարանում, որտեղ մոնտաժվել էր ինքնաշեն ջրատաքացուցիչ: Ներքին գործերի նախարարության կողմից տարածված հաղորդագրության մեջ նշված է, որ զոհերի թվում կա հայր եւ որդի, կային նաեւ եղբայրներ: Հարեւանների տեղեկությամբ, զոհվածների մեծ մասը բարեկամներ էին եւ վարձակալում էին բնակարանը:

«Ղազտրանսգազ» ընկերության ներկայացուցիչների տեղեկատվությամբ, վարձակալված բնակարանում բանվոր միգրանտներ էին ապրում, որոնք աշխատում էին թբիլիսյան կառույցներից մեկում: Ընկերության ներկայացուցիչները կենվորներին քանիցս խնդրել էին փոխել անսարքին գազի վառարանը, իսկ մի քանի օր առաջ դադարեցրել էին նրանց գազի մատակարարումը, բայց նրանք անօրինականորեն կրկին միացել էին գազի խողովակին:

Այդ միջադեպի հաջորդ օրը բնական գազից թունավորման հերթական դեպքը վավերացվեց Թբիլիսիի մեկ այլ թաղամասում՝ Ջղվիսուբանիում (Ծովի թաղամասում, նախկին ԹԵՄՔԱ թաղամասում): Թունավորվել են ընտանիքի 6 անդամները, այդ թվում երկու երեխա: Շտապ օգնության բրիգադը երեխաներին տեղափոխել է Իաշվիլու անվան կլինիկա, ընտանիքի մյուս անդամներին՝ 5-րդ հիվանդանոց:

Բժիշկների հայտարարությամբ, նրանց կյանքին վտանգ չի սպառնում, համապատասխան բժշկական օգնություն է ցուցաբերվում:

ՍՊՈՐՏ

## ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ, ՄԱՐԻԱՄ ԵՎ ՍՈՆԱ...



Հունվարի 25-27-ը Բուլղարիայի Խասկովո քաղաքում անցկացվեց բուլղարահայ Եվրոպայի բազմակի չեմպիոններ Ղասաբյան եղբայրների անվան միջազգային մրցաշարը փետրագնդակի մարզաձեւում: Մրցաշարի մասնակիցների թվում էին Թբիլիսիի VIP.SOFIA.GE մարզակումբի հիմնադիր նախագահ եւ գլխավոր մարզիչ Սոնա Վարդանյանի սաները: Մինչեւ 17 տարեկանների մրցաշարում ճանաչված մարզիչի սանուհի Մարիամ Խաչատրյանը կանանց զուգամրցումում արժանացավ ոսկե, իսկ անհատական մրցաշարում՝ բրոնզե մեդալի, տղամարդկանց զուգամրցումում, վետերանների մրցաշարում Վադիմ Սարգսյանը իր ակտիվում գրանցեց ոսկե մեդալ:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

## ՍՏԵՓԱՆԾՄԻՆԴԱ-ԼԱՐՍ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԸ ԲԱՑ Է

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարարության ճանապարհային դեպարտամենտի տեղեկատվության համաձայն, փետրվարի 1-ի դրությամբ, Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է տրանսպորտային բոլոր միջոցների համար:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Բանանը հայերենով: 6.Հերոս Շիրվանզադեի «Քաոս» վեպում: 10.Հ.Շիրազի ստեղծագործություններից՝ «... Միրզա»: 11.Կղզի Միջերկրական ծովում: 12.Սուտ, ոչ ճիշտ, անճշտություն: 15.Աֆրիկյան պետություն: 17.Մեքսիկական խմիչք: 18.Ջուր, անտեղի: 20.Նար-Դոսի «Ես եւ ...» վիպակը: 21.Հովհ.Թումանյանի հերոսներից: 22.Նորվեգացի դրամատուրգ Հենրիխ ...: 23.Բացասական պատասխան: 25.Անապատ Սիրիայում Դեր ...: 26.Ճիտ, պարանոց: 27.Թռչունների խումբը: 28.«... լաճ տնավեր» (Կոմիտաս): 30.Դպրոցում 45 րոպեն: 32.Ապարը երկրի ընդերքում: 34.«Ես»-ը սեռական հոլովում: 37.Որսորդ, որսկան: 39.Պետություն Ասիայում: 40.Արաքսի անվանումներից: 42.Թուրք զորավար՝ ... Թուրք: 43.Ցուցական դերանուն: 44.Երաժշտական խումբ Հայաստանում: 45.«Կյանք» բառի գրաբարյան ձեւը: 47.Թաղամաս Երեւանում: 48.Քաղաք Իրաքում: 50.Լոկ, միակ: 51.Լինում է այդպիսի անձրեւ: 53.Հուր, կրակ: 54.Անգլիացի ֆիզիկոս ... Նյուտոն: 56.Գետ Ուկրաինայում: 59.Կշռի միավոր: 60.Էշի տերը: 61.Չոր տարածք: 62.Հայ բանաստեղծ, տաղերգու (13-րդ դար):

***ՈՒՂՂԱՁԱՅՑ.*** 1.Ալ.Դյումայի ստեղծագործություններից: 2.Բարի լուր: 3.Լեռնաշղթա Հայաստանում: 4.Հարցական դերանուն: 5.Փեսայի «սիրելին»: 6.Խաղաթղթի տեսակ: 7.Մեքսիկայի տարածքում ապրող ցեղ: 8.Եգիպտոսի մայրաքաղաքը: 9.Լեւոն Շանթի հերոսուհի: 13.Գիտությունների ազգային ...: 14.Ճյուղ, միջակայք: 16.Մակերեսի չափման միավոր: 19.Հույների գերագույն աստվածը: 24.Հին հույն ֆիզիկոս: 27.Օժանդակ բայ: 29.Հույն բանաստեղծ Հոմերոսի երկերից: 31.Ավերված ու թալանված հայկական քաղաք: 32.Հայերը քրիստոնեությունից առաջ: 33.Թութակի տեսակ: 35.Լրիվ չբաժանված թվի մնացած մասը: 36.Լիճ Վրաստանում: 38.Զորավար Անդրանիկի ծննդավայրը՝ Շապին ...: 41.Ասորի եկեղեցական գործիչ, պատմիչ ... Գլակ: 46.«Այստեղ»-ը գրաբարում: 49.Թերություն, պակասություն: 52.Դհոլ նվագողը: 53.Աչքի «օգնականը»: 55.Ժխտական նախածանց: 57.«... ցանկացա» (ժող.երգ): 58.Բագրատունի արքա:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 3.Հանելուկ: 9.Նանի: 10.Դիեզ: 11.Տեռոր: 12.Եղիշե: 13.Սակր: 15.Նմուշ: 17.Կրիպտոն: 19.Հարիսա: 21.Ամպրոպ: 24.Ֆալես: 26.Տաճար: 27.Քութեշ: 28.Ակրոպոլիս: 29.Կավատ: 31.Վիշապ: 33.Դինար: 34.Մալագա: 36.Ֆլորին: 37.Սաքսաուլ: 40.Առած: 43.Էմին: 45.Մելիք: 46.Շինել: 47.Օսլա: 48.Բզիբի: 49.Սեմինար:

***ՈՒՂՂԱՁԱՅՑ.*** 1.Ռաճա: 2.Լիտր: 3.Հեռակա: 4.Ներգի: 5.Լաերտ: 6.Կրիշնա: 7.Աղեն: 8.Զեբու: 14.Կարիճ: 16.Մարութ: 18.Պելոպոնես: 19.«Հատակում»: 20.Ստրատեգ: 22.Մաքսվել: 23.Պաշտպան: 24.Ֆարադ: 25.Սալոր: 30.Վիլլա: 32.Շերամ: 35.Ասուլիս: 36.Ֆլանդր: 38.Քրքում: 39.Արշին: 41.Ռասա: 42.Ծմակ: 43.Էլբա: 44.Իմիր:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774 www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН" Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445